

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Մայրենի լեզու, 4-րդ դասարան

Տարբերակ 3-րդ

Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքները:

Մայրը

Մի գարնան *իրիկուն* դռանը նստած գրույց էինք անում, երբ այս դեպքը պատահել: Էս դեպքից հետո ես չեմ մոռանում էն գարնան իրիկունը: Ծիծեռնակը բույն էր շինել մեր սրահի օձորքում: Ամեն տարի աշնանը գնում էր, գարնանը ետ գալի, ու նրա բունը միշտ կպած էր մեր սրահի օձորքին: Ե՛վ գարունն էր բացվում, և՛ մեր սրտերն էին բացվում, հենց որ նա իր զվարձիչով հայտնվել մեր գյուղում ու մեր կտուրի տակ:

Եվ ի՛նչ քաջ էր, երբ առավոտները նա ծլվլում էր մեր երդիկին կամ երբ իրիկնապահերին իր ընկերների հետ շարժվում էին մի երկար ձողի վրա ու «կարդում իրիկնաժամը»:

Եվ ահա նորից գարնան հետ վերադարձել էր իր բունը: Ձու էր ածել, ճուտ էր հանել ու ամբողջ օրը *ուրախ* ճչալով թռչում, *կերակուր* էր բերում իր ճուտերին: Էն իրիկունն էլ, որ ասում եմ, եկավ, կտցում կերակուր բերավ ճուտերի համար: Ճուտերը ծվծվալով բնից դուրս հանեցին դեղին կտուցները:

Էդ ժամանակ, ինչպես եղավ, նրանցից մինը, գուցե ամենից անզգույշը կամ ամենից սովածը, շտապել, ավելի դուրս ձգվեց բնից ու ընկավ ներքև:

Մայրը ճչաց ու ցած թռավ ճուտի ետևից: Բայց հենց էլ վայրկյանին, որտեղից որ է, դուրս պրծավ մեր կատուն, վեր թոցրեց փոքրիկ ճուտը:

- Փի՛շտ, փի՛շտ, – վեր թռանք ամենքս, իսկ ծիծեռնակը սուր ծղրտալով ընկավ կատվի ետևից՝ նրա շուրջը թրթռալով կտցահարելով, բայց չեղավ: Կատուն փախավ-մտավ ամբարի տակը: Եվ այս ամենն այնպես արագ կատարվել, որ անկարելի էր մի բան անել:

Ծիծեռնակը դեռ ծղրտալով պտտում էր ամբարի շուրջը, իսկ մենք՝ երեխաներս, մի-մի փայտ առած պտտում էինք ամբարի տակը, մինչև կատուն դուրս եկավ ու փախավ դեպի մարագը՝ դունչը լիզելով:

Ծիծեռնակը դատարկ կատվին որ տեսավ, մի զիլ ծղրտաց ու թռավ, ի՛սկ նալ դիմացի ծառի ճուղին: Այնտեղ լուռ վեր եկավ: Մին էլ տեսանք՝ հանկարծ ցած ընկավ մի քարի կտորի նման: Վազեցինք, տեսանք՝ մեռած, ընկած է ծառի տակին:

Մի գարնան իրիկուն էր որ այս դեպքը պատահեց: Շատ տարիներ են անցել, բայց ես չեմ մոռանում այն գարնան իրիկունը, երբ ես առաջին անգամ իմացա, որ ծիծեռնակի մայրն էլ մայր է, ու սիրտն էլ սիրտ է, ինչպես մերը:

1. Տեքստի բառերից 4-ում բաց թողած տառի փոխարեն **դեղին ներկած գծիկ** է դրված: Լրացրո՛ւ բաց թողած տառերը **կարմիր** գույնով: (4 միավոր)

2. Ի՞նչ է նշանակում տեքստում հանդիպող **ծորտալով** բառը: Ճիշտ պատասխանն ընդգծի՛ր. (1միավոր)
 - ա) ծիծաղելով
 - բ) թռչկոտելով
 - գ) ճչալով
 - դ) մկկալով:

3. Տեքստում **թավ և շեղ գրված** բառերը փոխարինի՛ր հոմանիշ (իմաստով մոտ) բառերով: (2միավոր)

4. Տրված բառերից որի՞ դիմաց է սխալ նշված նրա տեսակը՝ ըստ կազմության: Սխալ տարբերակն ընդգծի՛ր. (1միավոր)
 - ա) իրիկնապահ-բարդ
 - բ) անզգույշ-ածանցավոր
 - գ) փոքրիկ-պարզ
 - դ) այնտեղ-բարդ:

5. Տեքստում **կանաչ** ներկված բառերից ո՞րն է գրված հոգնակի թվով: Այն ներկի՛ր **կարմիր**: (1միավոր)

6. Տրված բառերից յուրաքանչյուրի դիմաց նշված է, թե այն ինչ խոսքի մաս է: Ո՞ր տարբերակն է սխալ, ընդգծի՛ր այն. (1միավոր)
 - ա) վազեցինք-բայ
 - բ) երկար- ածական
 - գ) կտուց-գոյական
 - դ) դեղին-գոյական:

7. **Կապույտ** ներկած բայերը անհրաժեշտ ձևով համապատասխանեցրո՛ւ տեքստին՝ պահպանելով գույնը: (2միավոր)

8. Տրված նախադասության մեջ գտիր՝ ո՞վ կամ ի՞նչը ի՞նչ էր անում (ենթական և ստորոգյալը) և այդ բառերը **մանուշակագույն** դարձրո՛ւ: (1միավոր)
Մայրը ճչալով թռավ ներքև ընկած ճտի ետևից:

9. Տեքստում **մոխրագույն** ներկի՛ր ուրիշի ուղղակի խոսք պարունակող նախադասությունը: (1միավոր)

10. Տեքստում ընդգծված նախադասության մեջ բաց է թողնված մեկ կետադրական նշան: Դի՛ր բաց թողած կետադրական նշանը: (1 միավոր)
11. Ստեղծագործության գլխավոր իմաստն արտահայտող նախադասությունը մուգ կապույտ ներկի՛ր: (1 միավոր)
12. Պատասխանի՛ր՝ ի՞նչ սովորություններ ունեն ծիծեռնակները: (1 միավոր)
13. Ի՞նչ պատահեց ծիծեռնակին, երբ տեսավ դատարկ կատվին: Ճիշտ պատասխանն ընդգծի՛ր. (1 միավոր)
- ա) թռավ-գնաց, որպեսզի կերակուր բերի
 - բ) հանգիստ նստեց ծառի ճյուղին
 - գ) քարի կտորի նման ցած ընկավ ճյուղից
 - դ) ծլվլում էր երդիկին:
14. Ծիծեռնակի ո՞ր ճուտը կատվի գոհը դարձավ: Ճիշտ պատասխանն ընդգծի՛ր. (1 միավոր)
- ա) ամենից փոքրը կամ ամենից անկարգը
 - բ) ամենից անվախը կամ ամենից չարաճճին
 - գ) ամենից մեծը կամ ամենից հնարամիտը
 - դ) ամենից անզգույշը կամ ամենից սովածը:
15. Պատասխանի՛ր՝ ինչո՞ւ երեխաները չկարողացան փրկել ծիծեռնակի ճտին: (1 միավոր)